

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻԵԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՋՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ օր, Մայր Աթոռում հոգևոր ուրախության և բերկրանքի տոն էր։

Վեհափառ Հայրապետի հոբելյանի երջանիկ առիթով, Մեծի Տանն Կիլիկիո ծերունազարդ Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, Կիլիկյան Աթոռի երիտասարդ և շնորհալի միաբան հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Կարպիսյանին և հոգեշնորհ Տ. Զավեն աբեղա Արզումանյանին, և նոյեմբերի 8-ին՝ հոգեշնորհ Տ. Գյուտ աբեղա Նագգաշյանին, շնորհեց մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և հավատացյալների ներկայության, երեկոյան ժամերգությունից հետո։

Շնորհաբաշխության այդ նվիրական օրերին ուրախության արցունք կար բոլորի, և մանավանդ գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոսի աչքերում, այն խորունկ համոզմամբ, որ ամրապնդվում է Կիլիկյան օրինապահ միաբանությունը։ Ավելի քան մխիթարական և քաջալերիչ էր այն հանգամանքը, որ չեն մեռել Կիլիկյան Աթոռի դարավոր ավանդությունները, նախանձախնդրությունը, հավատարմությունն ու նվիրման ոգին, արդարության և իրավունքի պաշտպանությունը Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ նոր սերնդի սրտերում, որոնք կոչվել են ժառանգորդներ լինելու Կիլիկյան հայրապետների և մեծանուն վարդապետների սուրբ վաստակով ձեռք բերված հոգևոր արժեքների, ավանդների։

Խաչ սրբազանի «Պահպանիչ»ով վերջանում է այս արտառուչ արարողությունը։ Ապա նա իր հայրական քաջալերական և խրատական խոսքն է ուղղում նորընծա վարդապետներին, որպեսզի նրանք միշտ պահեն «զպատուէր օրինադրութեանցն հարցն մերոց՝ ողջամիտ վարդապետութեամբ ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ»։

Վեհարանում Վեհափառ Հայրապետը հայրական գուրգուրանքով ընդունում է նորընծա վարդապետներին և Իր սուրբ ձեռքով նրանց կուրծքը զարդարում վարդապետական լանջախաչով, հորդորելով, որ հպարտությամբ և արժանավորությամբ կրեն Տիրոջ խաչը, և հավատարմությամբ ու սիրով ծառայեն Եկեղեցիին, Ազգին ու Հայրենիքին։

Հանուն նորընծաների, երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է մեր նորընծա վարդապետներին, մաղթելով նրանց կարողություն և ուժ իրենց հետագա ազգային-եկեղեցական գործունեության ճանապարհին։